



Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տ է լ է Գ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առուստեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է առէ լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է լ է Գ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԵՆՏԵՄԵՐԻ 23-ԻՆ, ՅԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆ 12-ԻՆ,

Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքում,

Գ Ա Մ Ա Ռ - Ք Ա Թ Ի Պ Ա Յ Ի

արձանի բացման օրը, կատարվելու է

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ի Ո Ր Հ Ո Գ Յ Հ Ա Ն Գ Ի Ս Տ

1—3

Յր. Չախուչեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է անյապաղ ձեռնարկել. — ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պետական նախարարի հոգեբ.
արդիւնագործութեան նոր ձեւը. Լեւոն Եւ
Սեդ. Նախկին Երեւանի քաղաքի. Ներքին լուսին.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նախկին Գերմա-
նիայից. Արտաքին լուսին. — ՀԵՌԱԳԻՆՆԵՐ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Յուսանադէտը.

ՊԵՏԻ ԱՆՅԱՊԱՂ ԶԵՆԱՐԿԵԼ

Կողմանեան ցուցահանդէսը գրաւում է
բազմաթիւ այցելուներին. Առաջին տասն
վեց օրում այցելուների թիւը հասաւ
64,000-ի, որ թիֆլիսի համար բաւական
մեծ թիւ է: Այդ հաշուի մէջ չեն մտել
քաղաքի զանազան դպրոցների աշակերտ-
ները, որոնք ամէն օր մեծ խմբերով այ-
ցելում են ցուցահանդէսը:

Այցելուների համար կան գեղեցիկ շի-
նութիւններ, ծաղկոցներ, շատրուաններ,
ճաշելու տեղ եւ երաժշտութիւն, երեկո-
ները էլէքտրական լուսաւորութիւն. Եւ
թատրոնական ներկայացումներ: Սակայն
մի շատ կարեւոր եւ անհրաժեշտ բան պա-
հաւում է ցուցահանդէսի այցելուների հա-
մար. դա բացառութիւն չէ, որ անհրաժեշտ
կատարելու է: Այցելուներ չը գիտէ, թէ
ուճիկ տեղեկանայ հանդէս դրած առար-
կաների մասին: Նրան չեն բացատրում եւ
չեն պատմում ոչինչ ցուցահանդէսի վերա-

բերութեամբ: Բացառութիւն կազմում են
միայն մի քանի պաշտօնականներ:

Եթէ ցուցահանդէսի բացման առաջին
օրերը եւ շաբաթները այդ պակասութիւ-
նը փոքր ի շատէ ներքին կարելի էր հա-
մարվել, այժմ բոլորովին անհնարին է:
Ցուցահանդէսը կազմակերպված էր կարճ
ժամանակում, մի քանի ամսվա ընթաց-
քում, եւ ընկանաբար պէտք է ունենար
իր թերութիւնները, որոնց թիւին պէտք է
հաշուել եւ բացատրութիւնների պակա-
սութիւնը ու կատարողի բացակայութիւնը:
Հասարակութիւնն էլ իր կողմից ցուցա-
հանդէսի առաջին օրերը աւելի զբաղված
էր ընդհանուր դիտողութիւններով, քան
մանրամասն ուսումնասիրութիւններով:

Այժմ արդէն ժամանակն է լուրջ կեր-
պով զբաղվել ցուցահանդէսը ուսանելի
դարձնելու եւ այցելուների հետաքրքրու-
թիւնը յազդեցնելու ու իրացնելու բաւա-
րար կերպով: Իւրաքանչիւր բաժնի պէտք
է առանձին հոգ տանել, որպէս զի մշտա-
պէս ներկայ լինեն այնտեղ բացատրողներ
եւ տան հասարակութեան հարցերին ճիշդ
եւ իրականաբար պատասխաններ: Իսկ մի քա-
նի մասնադիտական գործերի մասին նը-
պատակարարաբար կը լինէր կազմակերպել
մի շարք դասաստուգութիւններ՝ հաղորդելու
ունկնդիրներին ամբողջացրած տեղեկու-
թիւններ թէ հանդէս դրած իրերի, թէ
նրանց նշանակութեան, թէ արդիւնա-

գործութեան պակասութիւնների եւ կա-
րելքների եւ թէ այն միջոցների մասին, ո-
րոնցով կարելի է նպաստել այս եւ այն ար-
դիւնագործութեան զարգացմանը:
Այդ կարեւոր գործը սպասում է շու-
տափողի կազմակերպութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՈԳԵԲ. ԱՐԴԻՆԵՆԱ-
ԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԶԵՆԻԸ

Ի նոյնպիսի դեպքերում մենք արդէն յայտա-
բարել է, որ Նախարար 1901 թ. յունիսի 30-ի
մինիստրների կոմիտեի Բարձրագոյն հաստատ-
ված որոշման ընդհանուր մասնաւորութիւն
պատկանող ծովագործը ածուրդով արվելու է
նախարարութեանը համար: Այդ նպատա-
կով ծովագործից վերջովմ է մօտ 300 դե-
տաւան հող ու բաժանած 100 կտորի, իւրա-
չիւրը 3 դեքետարին տարածութեամբ: Հողերը
տրվելու են բաժնից, արդիւնագործի շա-
թի քանակութիւնից. գանձարանին պէտք է
յատկացնել 40 /-ով: Եթէ այդ առկառով ար-
դիւնագործը ցանկացողներ չը լինեն, այն ժա-
մանակ տուրքի չափը անորոշմամբ կը պակա-
սեցնուի 35, 30 մինչեւ 25-ի:

Որովհետեւ այդ հողը այժմ ծածկված է ջը-
րով, ուստի իւրաքանչիւր կտորը ցածաքցնե-
լու համար արդիւնագործը վերցնելու ժամա-
նակ պարտաւոր է մտնել պետական գանձա-
րան 120 հազար ռուբլի. այս գումարը ապա-
գայում կը ծածկվի արդիւնագործից հասանե-
լիք նաւթի փողով, չը հաշված այն գումարը,
որը պետական գանձարանում պիտի մնայ, որ-
պէս գրաւական կանոնաւոր արդիւնագործու-
թեան: Իւրաքանչիւր դեքետարին արդիւնա-
գործից քանակութեան մինիմումը նշանակ-
ված է 300 հազար պուլի նաւթ: Այս նոր
առաջարկութեան զիտար կէտերը:

Մենք միշտ այն կարծիքին ենք եղել, որ պե-
տական նաւթային հողերը պիտի արդիւնագործ-
վեն բաժնով, որովհետեւ սա ամենաարդար
ձեւնապարհն է, արդիւնագործին միջոց է տա-
լիս շարունակել հողերի արդիւնագործութիւնը
նաւթի համեմատաբար էժան գների ժամա-
նակ: Որպէս փաստ, մենք մասնագէտ կանոն-

թիւի-էլաթի պետական հողերում գտնվող
հանքերը, որոնք պուլիւնագործ կը վերցրած
նաւթի գները ընկել են եւ համարեա բոլոր
հանքերում գործերը զարգացրել են: Մինչդեռ
եթէ նրանք բաժնով տրված լինէին, նրանց
արդիւնագործութիւնը այժմ էլ կը շարունակ-
վէր: Պուլիւնագործը հողեր տալու եղանակի
փաստակար հետեւանքները այժմ աչքով տես-
նում ենք. բազմաթիւ արդիւնագործներ աղ-
քատապել են՝ բառի բուն նշանակութեամբ, իսկ
պետական գանձարանը մեծամեծ փաստեր է
կրել այդ ժամանակամիջոցին, որովհետեւ նը-
րա հողերի արդիւնագործութիւնը յետաձգվել
է եւ այդ բոլորը չնորհիւ մի քանի մարդ-
կանց, որոնք կազմել են ակզնական ծրագիր-
ները: Ցանկալի է, որ այդպիսի ծրագիրներ
կազմելու ժամանակ լուսնային վարչութիւնը
գործին ձեռնհաս եւ հուստ ժարդիկ հրաւրել
խորհրդակցելու, երկու կողմի—արդիւնագործի
եւ պետութեան—չանցրել հաշտեցնելու համար:
Հակառակ դէպքում, ծրագիրները միշտ միա-
կողմանի են լինում, որովհետեւ նրանք կազմ-
վում են մեծ մասամբ այնպիսի մարդկանց
ձեռքով, որոնք գործի տնտեսական կողմի հետ
չառ թիչ են ծանօթ, կամ թէ բոլորովին ծանօթ
չեն:

Այժմ դառնանք այդ նոր առաջարկութեան
Թէպէտ այստեղ զիտար պայմանը՝ փոխա-
նակ պուլիւնագործի՝ բաժնին է տրված, բայց եւ
այնպէս, մենք գտնում ենք անձեռնառու ար-
դիւնագործի համար, որովհետեւ 40% արդիւ-
նաբերած քանակութեանից յատկացնել հողա-
տիրոջ—այդ չափազանց մեծ վճար է ներկայ
պայմաններում, երբ նաւթի հորեր փորելը եւ
նրանց արդիւնագործելը բաւական ծանր եւ
գծուար պարագաների է ենթարկված: Արդիւ-
նագործի ամէն մի քայլափոխը փող արժէ եւ
հորի արդիւնութիւնը շատ անգամ կախված է
լինում մի հասարակ պատահանքից:

Այսպէս այն ժամանակները, երբ փորելով
100—150 սաժէն խորութիւն, նաւթի հա-
րուստ չերտեր էին հանդիպում եւ իսկոյն
սկսում հորի արդիւնագործութիւնը: Այդ տե-
սակ հորեր փորել տեսում էր 7—10 ամիս
եւ նստում էր ամենաթանգը 25—35 հազար
րուբլի: Իսկ այժմ այդ խորութեան վրա հա-
րուստ նաւթային չերտերի պատահելը շատ

գործի զիտար հոգացողութիւնն ընկած էր
միայն հոգեւորականութեան վրա. սակայն նոր
գարը նոր պահանջներ ստեղծեց, նոր գործու-
նեւ առաջարկեց, զեւթարտական շարժումն
ուժեղացրեց եւ այդ բոլորի շնորհիւ առաջ
բերեց մի շարք ընկերութիւններ—(«British
and foreign school Society», «National school
Society» եւ այլն), որոնք ամենամեծ եռանդով
սկսեցին գործել դպրոցական ասպարէզում:

1890 թ. ապրիլին արդէն գոյութիւն ունէին
2,452 դպրոցական մասնաժողովներ 18,500,000
անդամներով *): 1890 թ. տարրական դպրոց-
ներում սովորող սաների թիւը հասնում էր
5,589,285-ի, իսկ 1894 թ.ին—6,830,000-ի:
Անդրկայում այժմ գոյութիւն ունեն 19,800
դպրոցներ 30,100 դասարաններով: Իրանց
պահպանութեան համար ահագին զոհաբերու-
թիւններ են անում թէ կառավարութիւնը եւ
թէ մասնաւոր անհատներ ու ընկերութիւն-
ներ: Միայն 1894 թ. կառավարութիւնը դրպ-
րոցական գործի համար ծախսել է 82,287,719
րուբլի:

Եւ օտարադիւստ 1872 թ. կային միայն
1979 դպրոց—218549 աշակերտներով, իսկ
1894 թ.—3045 դպրոց—643,483 աշակերտ-
ներով: 1894 թ. Եւրոպայի բոլոր դպրոց-
ների վրա ծախսված է 13,011,241 րուբլի, ո-
րից 3,167,411 ր. դարձաւ անգլիական կառա-
վարութիւնն է վճարել:
Իրլանդիայում 1894 թ. եղել են 8,505
դպրոց—1,028,281 աշակերտներով:
Տրանսիւսիայում 1895 թ. գոյութիւն են

ունեցել ընդամենը 83,242 դպրոց *)—5,540,095
աշակերտ—աշակերտութիւններով: Իրանց վրա
ծախսվում է տարեկան 69,864,779 րուբլի,
որից 47,286,241 րուբլի միայն կառավարու-
թիւնն է վճարում:

Պրուսիայում 1891 թ. ապրիլին գոյու-
թիւն ունէին 34,742 միայն տարրական դպ-
րոցներ—4,916,476 աշակերտ—աշակերտութի-
ւններով, որոնց վրա տարեկան մի քանի տա-
նակ միլիոններ են ծախսվում:

Աւստրիայում 1891 թ. կային մօտ 20,000
դպրոցներ—3,800,000 սովորողներով:
Այժմ դառնանք նախ ամբողջ Ռուսաստա-
նին եւ ապա Կովկասին եւ տեսնենք, թէ վե-
րոյիշեալ օրինակների համեմատութեամբ որ-
պիսի պատկեր են ներկայացնում նրանք:

Ռուսաստանում դպրոցական գործը շատ
գանգալ է առաջագիծայն, շատ խոչ ու խու-
թերի է հանդիպել: Միայն XIX դարի երկ-
րորդ կէտից նա սկսել է զգալի կերպով բա-
րեկարգվել: 1855 թ. վիճակագրական տեղե-
կութիւններից երեւում է, որ այդ ժամանակ
ամբողջ պետութեան մէջ գոյութիւն են ու-
նեցել ընդամենը 8,227 ժողովրդական դպրոց-
ներ—450,000 աշակերտ—աշակերտութիւն-
ներով **):

Այնպէս ընդ ընդ ընդ ամբողջ բարենորո-
գումները մեծ չափով զարկ տուին նաեւ դպ-
րոցական գործի բարգաւաճմանը, այնպէս որ
1880 թ. ժողովրդական դպրոցների թիւը ար-
դէն հասել էր 22770-ի—1,140,915 աններով:

*) Ibid

**) «Россия къ концу XIX вѣка» подъ редак.
Бовалевскаго, стр. 477.

Այդ օրվանից անցել են երկար տարիներ
եւ դաստիարակչական գործը Ռուսաստանում
համեմատաբար աւելի բարեկարգ վիճակի մէջ
է մտել: Դեռ անցեալ 1896 թ. ապրիլին գո-
յութիւն են ունեցել 78,724 տարրական դպ-
րոցներ—3,801,133 աններով—(2,948,274 ա-
րական եւ 881,544 իգական): Իրանցից 37,708
ենթարկված էին լուսաւորութեան մինիմա-
լութեան, 34836—առաջաց սինօզին, իսկ 10,270
—գինուորական մինիստրութեան *): Այդ թը-
ւերն իսկապէս շատ ու շատ չնչին են, եթէ
աչքի առաջ ունենանք Ռուսաստանի լայնար-
ձակ տարածութիւնը եւ բազմաթիւ տեղա-
բնակութիւնը:

Դալով միջնակարգ դպրոցներին, պէտք է
նկատել, որ այդ կողմից էլ նախանշելի ունիչ
չը կայ: Ամբողջ պետութեան մէջ եղել են
միայն 191 գինուորական, 115 ընդհանուր
դպրոցներ եւ 53 պրօգրիմալիաներ:

Ռուսաստանի բարձրագոյն դպրոցների թիւը
միայն մի քանի տասնակի է հասնում: Իրան-
ցից ինքը համալսարաններ են—եւ 1899 թ. ա-
րական ունեցել են միայն 16,497 ուսանողներ
եւ 1,109 ազատ ունկնդիրներ:

Եթէ վերցնելու լինենք պետութեան զանա-
գոն մասերը, այն ժամանակ կը նկատենք,
որ դրանք դպրոցական գործի տեսակէտից
զգալի չափով տարբերվում են միմեանից:
Այսպէս, օրինակ, Բալտիկ ծովի ափերին կից
նահանգներում ամբողջ ազգաբնակչութեան
5,7%-ն է դպրոց այցելում **):

*) «Статистическія свѣдѣнія по началному об-
разованію въ Россійской имперіи за 1896 годъ».

**) Э. Левассеръ: «Народное образов.» т. II.

*) Э. Левассеръ: «Народное образование въ ци-
вильзованныхъ странахъ» т. I.

դժուար է. փորում են 250—300 սաժէն եւ այդ տեսում է մօտ երկու-երեք տարի ու նստում է առնուազն 80—100 հազար բուրլի. Բացի դրանից զետի տակ այժմ ունենք մի այնպիսի թշնամի, որի հետ կուելը այնքան էլ հեշտ չէ. Այդ թշնամին ջրերի սաստիկ հոսանքն է. որ շատ անգամ խեղդում, անհետացնում է նաւթի ամանաւորները հոսանքը կար ժամանակ, որ հորը փորելու միջոցին մեքենայի տակից շատուած էր խփում. իսկ այժմ մենք նաւթի դուրսեցման մասին գաղափար ենք կազմում միմիայն այն ժամանակ, երբ դուրս հանած աւաղից նաւթի հոս է գալիս. Մարդիկ դադարեցնում են փորելը եւ ամիսներով աշխատում ջրերի առաջը առնելու վրա. Այդ երկար աշխատանքից յետոյ փորձում են քաշել եւ շատ անգամ պատահել է, որ անալոյ է հղել գործը. ջրերի ճառագարնը կապել բոլորովին չէ աղովել. հորի մէջ նորից ջուրը իր կատաղի դերը կատարել է եւ խեղդել նաւթի հոսանքը. կամ եթէ աղովում է ջրերի առաջը առնել, այդ էլ երկար չէ տեսում, ամենաշատը 1½—2 տարի, նորից հորի մէջ ջուրը աւելանում է եւ նաւթը անհետանում. Այդպիսի հանգամանքներում հորի արդիւնագործութիւնը անհնարին է դառնում եւ ստիպւած են լինում նորից խորացնել հորը եւ նաւթի նոր շերտեր փնտնել. եւ այդ տեսում է ամիսներ, տարիներ. Մասնակցորէն օր աւելանում են:

Փ. Մարգարեան

ԱՍԵՑԻՔ ԵՒ ՄԵԶ

«Մշակի» էջերում այս ամառ մի քանի անգամ զանազան ուրախութիւններ երեւանք, իրենք թէ Բագուր եւ Թիֆլիսի գրադատիկ ընկերութիւնների ներկայացուցիչները միասնում են խումբ կազմելու ապագայ սեզօնի համար. միւս անգամ քանկութիւն յայտնվեց, որ դերասանները մեծ-մեծ պահանջներ չանեն, որով կարող են գործը փչացնել, դարձեալ մի քանի լուրեր, եւ յանկարծ Թիֆլիսի ղեկավարները հրաժարում են խումբ պահելուց:

Որովհետեւ հասարակութեան մէջ ձայն է տարածվել, թէ խումբ չը լինելու պատճառը չափից դուրս մեծ պահանջներն են, որ արել են դերասանները, ուստի եւ, մի քանի փաստեր ժողովելով, թույլ եմ տալիս ինձ մի քանի խօսք ասել:

Թիֆլիսում պ.պ. ղեկավարները դիմել են միմիայն ա. Մայսուրեանին, օր. Սունդուկեանին եւ պ. Արեւիկեանին. Եւ Շուշի օր. օր. Ֆելէկեանները ու պ. Արաքեսեանին: Տ. Մայսուրեանից մասին չը կարողացայ հաստատ տեղեկութիւն հաւաքել, արդեօք նա չափից մեծ պահանջ է արել, թէ ոչ օր. Սունդուկեանի հետ վերջացրել են, ուստի նա համաձայնութիւն կայացել է. պ. Արե-

Միջին նահանգներում . . .	2,90%-ը
Լեհաստանում	2,2 »
Սրբերում	1,6 »
Կովկասում	1,1 »
Թուրքեստանում	0,1 »

Այժմ տեսնենք, թէ որոնց կառավարութիւնը դպրոցների պահպանութեան համար օրքան զոհարելութիւն է անում:

Ինչպէս յայտնի է, դպրոցական գործը ամենաբարդաւան լինակի մէջ է գտնվում Անգլիայում եւ Միացեալ-Նահանգներում: Այդ երկու երկրում էլ կառավարութիւնները ամենաակտիվ կերպով մասնակցում են դպրոցական գործին: Անգլիան տարեկան մի քանի տասնեակ միլիոններով նպաստ է տալիս դպրոցներին եւ դրա փոխարէն պահանջում է միայն, որ դպրոցները ենթարկվեն պետական վերահսկողութեան եւ կատարեն նրա մի քանի պահանջները: «Սակայն, ասում է յայտնի մանկավարժ Ֆիլդը», Անգլիայում ժողովրդական լուստարութեան ղեկավարամենտը գոյութիւն ունի ոչ թէ նրա համար, որ իր ազդի վրին փաթաթել իր սեփական մանկավարժական թէօրիաները եւ ցոյց տայ, թէ ինչպէս պէտք է ուսում առնել, այլ նրա համար, որ նրա թաւան եւ ուրիշ միջոցներով նպաստէ ժողովրդական լուստարութեան:

Միացեալ-Նահանգներում էլ նկատվում է նոյնպիսի վերաբերմունք դէպի դպրոցական գործը: Կառավարութիւնը շատ լաւ հակադրում է, որ դպրոցը ժողովրդական սեփականութիւն է, ուստի եւ չէ կարելի նրա վրա այս կամ այն ձեւով ճնշում գործ դնել եւ ժո-

խանը շատ իրաւացի կերպով խնդրել է մի քանի օր ապասել, որպէս զի մտածէ. օր. օր. Ֆելէկեանները բոլորովին չեն պատասխանել եւ պ. Արաքեսեանը հեռագրել է, որ ծառայում է կնոջ հետ: Դուք տեսնում էք, որ այս հինգ հոգուց միայն տ. Մայսուրեանից պայման է անորոշ, թէ չէ պ. Արեւիկեանի մտածելը չէ նրա շանակում մեծ-մեծ պահանջներ անել. նա միշտ լիջել է աւելի, քան հարկաւոր է. նոյնպէս եւ պ. Արաքեսեանի պատասխանը մեծ պահանջ է. գուցէ նրա կինը ծառայում է հայ բեմին եւ կարեւոր ոյժ է Բացի արանից ոչ ոքին չեն դիմել: Ուր մնացին տ. Սիրանոյշ, Աւետեան, Մելիքեան, Փառանձմէ, Ջաբել, օր. Վարդուհի, Աղաճեան, պ.պ. Ստեփանեան, Վրոյր, Յարութիւնեան, Տէր-Դաւթեան, Աղայեան, Աւարեան, Ջարիֆեան, Մելիք-Յովսէփեան եւ ուրիշները:

Դերասաններից ոչ մէկը, այն, պահանջներ չէ արել. եւ քաշութիւն չէ մեղքը թափել մի ամբողջ դասակարգի վրա, որ առանց այդ էլ պաշտպանվել չը գիտէ: Վերջապէս ինչու մէկի սխալը ընդհանուրին վերագրել. եթէ մեծ պահանջ անողները եղել են, թող գրեն, թող նրա անունը հրապարակ հանեն եւ ոչ թէ բոլորին մեղադրեն, թէ խոչընդոտ էք դառնում խումբ պահելուն:

Եւ կարծում եմ, որ հիմնաւոր պատճառը այն է, որ այստեղի ղեկավարները ուշ կպան գործին, չունեն պատրաստի ղեկավարութեան, քիչ փոքոր, ծանօթ չեն մեր ոյժերի հետ, որովհետեւ վերջին հինգ տարին հայոց խումբը խաղում էր Բագուում: Հիմնաւոր են այդ պատճառները, բայց այդ դէպքում պէտք էր լուռ ու մուշկ գործէին եւ յոյսեր չը տային բազումներին, որովհետեւ իրանք չը պահեցին թատրոն, իսկ բազումները, յայտնի չէ, պահելու են թէ ոչ:

Եւ կարծում եմ, որ ժամանակ է թողնել այն միտքը, թէ դերասանները գիշտ ուշ թեւում են պէտք է օգնեն թատրոնական գործին: Հայկական թատրոնը 40 տարուց աւելի է գոյութիւն ունի Կովկասում եւ ամեն անգամ, երբ տեղական դերասաններին են դիմում պայմանագրովելու համար, միշտ այդ գիշտութեան մասին են խօսում. եւ ի պատիւ իմ ընկերներին պէտք է ասեմ, որ նրանք միշտ զիջել են: Բայց մէկ էլ տեսնում էք, որ կան անարժանիքներ, որոնք առաջին տարուց աւելի են աստուծոյ, քան 15 տարուց դերասանները, որոնք վայելում են հասարակական յարգանքը: Ո՛ր տեղ է արդարութիւնը:

Եւ շատ հեռու եմ այն մտքից, որ բոլոր դերասաններին պէտք է անպայման աւելացնեն ուսմանը, վարձատրեն առատ: Ոչ. Եւ արդէն պատիւ եմ ունեցել այդ մասին գրելու «Մշակում» 1898 թիւին: Այժմ կը պարզեմ իմ միտքը աւելի որոշ փաստերով եւ ցուցմունքներով:

Դրովդի ինքնուրոյնութիւնը սահմանափակելու միայն աջակցում է ժողովրդին դպրոցական գործը բարեկարգելու եւ ընդարձակելու: Այդ հանգամանքի շնորհիւ Միացեալ-Նահանգներում այժմ դպրոցների թիւը հասնում է 235,426-ի—14,846,858 *) աշակերտ-աշակերտուհիներով:

Դառնալով Ռուսաստանին, պէտք է աչքի առաջ ունենայ, որ այստեղ հասարակական կեանքը բոլորովին ուրիշ կազմ ունի, ուրիշ գործունեւորիք եւ հանդիմանական գործը: Ան այդ պատճառով էլ նրա դպրոցական գործը բոլորովին ուրիշ կերպ է բնորոշվում: 1894 թ. ժողովրդական դպրոցների վրա ծախսվել է ընդամենը 23,041,340 ռուբլի, որից միայն 3,492,963 ռուբլին է պետական զանաւարանից դուրս եկել: Մնացած գումարները ստացվել են զանազան քաղաքներից եւ գիւղական հասարակութիւններից, եկեղեցիներից, ազնուականութիւններից եւ մասնաւոր մարդկանց նուէրներից:

Եթէ ժողովրդական լուստարութեան համար ծախսած գումարը բաժանենք ամբողջ ազգաբնակչութեան վրա, կը ստանանք 23 կօպ., այսինքն Ռուսաստանի իւրաքանչիւր բնակիչը տարեկան միայն 23 կօպէկ է ծախսում զրգրոցական գործի համար, այն ինչ պետական եւ տեղական միւս ծախսերի համար նա վճարում է արեւելյան միջին թիւով 11 ռուբլի **): Եթէ այդ գումարը համեմատենք Ռուսաստանի տարածութեան հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ իւրաքանչիւր ղեկավար տարածութեան

*) Այս թիւը Միացեալ-Նահանգների ամբողջ ազգաբնակչութեան 22,5%-ն է կազմում:

**) Լեւասեր: «Народное Образование» т. II, стр. 137.

Ամեն գործում կայ ստատիստիկա: Դա շատ բան է պարզում, թէ ով ինչ աստիճան աշխատանք է դնում գործի մէջ: Հինգ սեզօն Բագուն խումբ է պահել համարեա մի եւ նոյն դերասաններով. կարելի է կազմել մի ցուցակ եւ որոշել, թէ ով ինչքան աշխատանք է գործ դրել այս 5 տարուց ընթացքում. որոշել ով հարկաւոր է, ով ոչ: Այդ սխտեմը մտքած է արդէն արքունական թատրոններում, որ այդ կարգը վերցրել է դերմանական թատրոններից:

Ինչու ուրեմն այդ կերպ մի բան էլ մեզ մօտ չէ գտնուի: Ամեն գործում, թէ պետական ծառայութեան մէջ, թէ մասնաւոր անձերի մօտ, միշտ գնահատվում է ձեռն աշխատանքը, ձեռն եռանդը, ձեռն սէրը դէպի գործը:

Բոլորովին համաձայն եմ ձեռն հետ, պարտնենք, որ մեծ-մեծ պահանջներ չը պէտք է անել: Բայց թոյլ տուէք հարցնել, ովքեր են այդ պահանջներ անողները: Եթէ անում է մի դերասան կամ դերասանուհի, որ երկար տարիներ քրտինք է թափել հայ բեմի վրա եւ այժմ նրա արժանաւոր ծառայողներից մէկն է, ինչու խրախուսելու համար չաւելացնել նրա սոսկի, վատ չը պահել նրա սէրը, եռանդը դէպի գործը: Իսկ եթէ այդ պահանջը անում է մի նոր ոյժ, որը մի դերում լաւ է, իսկ տաւաւ վատ, նրան պէտք է ցոյց տայ իր արժանաւոր տեղը, թէպէտ այդպիսիները իրանց պրոպէտիստներ չեն, որիսկ աւելի առաջ կընկնեն, քան միւսները:

Թատրոն անկեղծաց չէ, որտեղ պէտք է ընդունվեն բոլոր հայ դերասանները: Վերջէք նրանց միայն, որոնք պէտք են, որոնք անհրաժեշտ են: Հինգ տարուց փորձառութիւնը պէտք էր, որ շատ բան օգտիրենք մարդկանց: Կան դերասաններ եւ դերասանուհիներ, որոնք ուղղակի աւելորդ են, խառնաբաշտ են ընդհանուր կարգը, դիսպլինին եւ իրանց ըմբռնութեամբ վատ օրինակ են դառնում միւսների համար:

Հարկաւոր եւ արժանաւոր ոյժին պէտք է վարձատրել, որովհետեւ միմիայն կանոնաւոր վարձատրութիւնը կարող է լաւ ոյժեր քաշել, բերել ապագայում դէպի թատրոն. նոյն ստատիստիկան ապացուցանում է, որ քանի արքունական թատրոններում տիրում էր միանուագ վարձատրութիւն եւ այդ կախումն ունէր ինքիստիքը քանակութիւնից, շատ քան դերասաններ փախում էին բեմից (բայց մի քանի փայլուն աստղերից, որոնք որոշ պայմաններով էին). իսկ երբ մտքդին կանոնաւոր տարեկան ուսման, այն ժամանակ շատ համարաւորական մարդիկ նուիրեցին իրանց բեմին եւ դրանով բարձրացրին նրա նշանակութիւնը անսամբի կողմից:

Եւ ինչու հայ դերասանը պէտք է զիջէ, քանի որ 20 տարուց ընթացքում կեանքի պայմանները փոխվել են, քանի որ նրան հարկաւոր է ապրել, քանի որ նա բեռնաւոր միայն 1½ կօպէկ է ծախսում ժողովրդական լուստարութեան համար, այն ինչ միւս ծախսերի գումարը դարձեալ մի ղեկավարին տարածութեան վրա հասնում է 70 կօպէկի:

Դառնալով այժմ Կովկասին եւ տեսնենք, թէ թուականի ամբողջ Կովկասում գոյութիւն են ունեցել ընդամենը 74 դպրոց—5,505 սովորողներով, այսինքն ազգաբնակչութեան իւրաքանչիւր 100 հոգուց միայն 0,19 է դպրոց ապրել: 1863 թուականին այդ թիւերի մէջ արդէն նըկատվում է զգալի փոփոխութիւն—առաջագիւմութիւն: Այդ ժամանակ Կովկասեան դպրոցների թիւը հասնում էր 321-ի—9,650 սովորողների: Իսկ 1899 թ. Կովկասում գոյութիւն են ունեցել.

12 արական զինադիրաներ	
1 » պրօգրմադիա	
9 րէալական դպրոցներ	
14 իզալական զինադիրաներ	
8 » պրօգրմադիա	
1 ուսուցչական ինստիտուտ	
4 » սեմինարիա	
45 քաղաքային դպրոցներ	
4 լեւնային »	
17 արհեստագիտ. դպրոցներ	
6 Մարիամեան »	
148 մասնաւոր »	
եւ 1540 տարրական »	

Ընդամենը 1809 զանազան դպրոցներ: Բացի դրանից գոյութիւն են ունեցել նաեւ

*) «Статистическія таблицы Россійской имперіи за 1886 годъ».

ւորված է ընտանիքով, հարկաւոր է կրթութիւն տալ զաւակներին, բեմական շորեր ունենալ. այն էլ վերջին տարազներով, ձեռնոցներ, կօշիկներ եւ այլն եւ այլն: Միթէ ամօթ չէ հոչակաւոր Բագուր եւ Թիֆլիսի հարուստների համար, որոնցից ամեն մէկը մենակ կարող է երկու, երեք խումբ պահել:

Երբ այս մեծ պատիւ մեր խմբի մի մասը խաղում էր Արտիստական ընկերութեան գեղեցիկ թատրոնում, որը շինված է մեր միլիոնատէրերի փողերի մի մասով, մեզ մի վրէժիկ զիջում հարեցին: Մեզանից լիովին ստանում էին վարձը եւ մինչեւ անգամ մի խոտացած կիրակի խլցին մեր ձեռքից: Բայց եւ այս տողերը իբրեւ մեղադրանք չեն գրում Արտիստական ընկերութեան դէմ, այլ փաստն էմ արձանագրում: 25 որ շինութիւնը միլիոնից աւելի է նստել, ուրեմն եւ պէտք է նրա ծախսը հանել:

Ո՛ր են մեզ մօտ մեկնեաններ, որոնց տեսնում ենք ուրիշ ազգերի մէջ: Արքունական թատրոնները ամեն տարի մեծ դէֆիցիտով են վերջացնում տարեկանը, չը նայելով լիքը մուտքերին: Մօսկվայի հանրաժամայնի գեղարուեստական թատրոնը տարեկան 40,000 ռուբլի վնաս ունի. նոյնը եւ Պետերբուրգի գեղարուեստական թատրոնը: Այս քանի օրս Մոսկովից 75,000 ռուբլի սկզբնական վնաս ստացաւ, որ խումբը չը մնայ առանց գործի...

Եւ ոչ ոք երբեք չէ բղաւում մեծ-մեծ վնասների մասին... Մի բայէ ձեռքները դրէք սրտի վրա եւ ասեցէք—ինչ մեծ ուսման են ստանում հայ բեմի ծառայողները: Ամենամեծ ուսմանը մեղանում 200 ռուբլի է, այն էլ հինգ ամիս միայն: Կասէք բեմեֆիս կայ: Լաւ, բայց չէ որ ապացուցված է, որ բեմեֆիսը մի վիճակաւաւ է. մի տարի կարող է աղող լինել, միւսը—ոչ. առէք առատ ուսման, վերջէք բեմեֆիսները ձեռք:

Ոչ, պարտնենք, մի աշխատէք դրօշներ եւ տեւից ընկնել, այլ զարթեցրէք քնած, թաթած եռանդը մեր հասարակութեան մէջ. թող նա իմանայ թատրոնի կրթիչ նշանակութիւնը, թող իմանայ, որ թատրոնը գուարճութեան եւ լօթիութեան տեղ չէ, այլ մաքուր տաճար. եւ աշխատեցէք այդ տաճարի ճշգրտութիւնը զարգացնել տարեկան, որովհետեւ միմիայն զարգացած, ինտելլիգենտ մարդը կարող է վառ պահել այդ տաճարի սրբութիւնները:

Դերասան Գ. Պետրոսեան

ՆԱՄԱԿ ԵՎ ԱՏԵՐԻՆՆՈՒՄ

Սեպտեմբերի 3-ին

Այժմ, աչքի առաջ ունենալով առաջիկայ քաղաքային ձայնաւորների ընտրութեան հարցը, աւելորդ չեմ համարում ծանօթացնել հայ ընթերցողներին եւ մեր հայ

1800-ի չափ մահմեդական (մզկիթներին կից) եւ հրէական (սինագոգներին կից) դպրոցներ, եթէ միայն դրանք արժանի են «դպրոց» անունը կրելու:

Պետական վերահսկողութեան տակ գտնված բոլոր միջնակարգ եւ տարրական դպրոցների աշակերտ—աշակերտուհիների թիւը հասնում է 120,889-ի *, որից

77,848-ը կամ 49,4% ուսուցիչներ են.	
29,378 » 18,7 » վարձիներ	
21,061 » 18,5 » հայեր	
5,153 » 3,3 » թաթարներ	
4,326 » 2,7 » լեռնականներ	
1,912 » 1,2 » հրէաներ	
եւ 9,816 » 6,2 » զանազան ազգ.	

Բացի դրանից գումար մահմեդական դպրոցներում եղել են 23,100 սովորողներ, իսկ հրէական դպրոցներում—1260:

Իսկապէս եթէ Կովկասի դպրոցների որակն ու քանակը համեմատենք նրա անցեալի հետ, այն ժամանակ կը նկատենք մեծ փոփոխութիւն—բարեկարգութիւն ու առաջադիմութիւն, իսկ եթէ նոյնը համեմատութեան դնենք մի որ եւ ժողաբնակչութիւնը երկրի հետ, այն ժամանակ ակնհերեւ կը դառնայ մեր երկրի յետադիմ վիճակը:

Եւ իսկապէս ինչ են ներկայացնում 1809 դպրոցների մի երկրի համար, որի տարածութիւնը հասնում է 416,028 քառակուսի վերստի եւ որի ազգաբնակչութիւնը 9,248,695 հոգուց է բաղկացած...

Ե. Թ.

*) «Кавказскій Календарь за 1901 годъ».

*) Мизнуевъ: «Очеркъ развитія и современнаго состоянія народнаго просвѣщенія въ Англіи», стр. 34.

ձակվեցին միասնաբար և հրդեհեցին ինքնին և քաղաքը, բայց յետ մղվեցին, որի ժամանակ կորցրին 10 մարդ սպանված և չորսը գերի բռնված: Ապա ապստամբները յարձակվեցին Շակվածի վրա, բայց նոյնպես յետ մղվեցին: Հունկոնցի հաղորդում են «Times» լրագրին. «Այստեղ Պիանդաուցից եկան միասին խմբավորված տեղեկություններ, որոնց նպատակն է փոխել մանջուրական Մին գրանատին: Սկսածուրի քաղաքացիական հեղափոխությունը անյապաղ անհրաժեշտ միջոցներ ձեռք առաւ: Չինական իշխանութիւնները Չաուչանֆուին 700 զինուորներ ուղարկեցին: Կարծում են, որ այդ զորքերին կաշնդլիք ճնշել ապստամբութիւնը: Տեղական վարչութիւնը և ազգայնականութիւնը տրամադրված են ինպատու միասնեցնելու:

ԲԵՐԼԻՆ: Կիսաշաուրի նահանգապետից հետեւեալ հաղորդագրութիւնն է ստացված. «Էլքրադերները տեղեկութիւնները իրենց դրութեան լրջութեան վերաբերմամբ զուրկ են հիմքից: Իւանչիկայ տեղեկացրեց ինձ հետաքրքիր, որ նորից ստանձնեց իր պաշտօնը:

ԿԻԼ: Ռուսաց «Ասօլ» շրջանաւոր, որ շինված է Կրուպիկ «Փերմանիա» նաւարանում, վերադարձաւ առաջին փորձնական ճանապարհորդութիւնից յետոյ, որ տեւեց մի քանի օր, և այսօր ընդունվեց ռուս կառավարութեան ներկայացուցչի կողմից:

ՄՍԿՎԱ: Ս. Ի. Մամոնտովն անակ ճանաչելու գործը յետաձգված է նահանգական դատարանում մինչև հոկտեմբերի 22-ը:

ԽԱՐԿՎ: Սեպտեմբերի 19-ին զինուորական դատարանում սկսվեց 13 ցիգանների գործը, որոնք հարաւային Ռուսաստանի զանազան քաղաքների մեջակներ են և մեղադրվում են մասնակցելու համար մի աւազակային խմբի, որ յարձակուիներ է գործել Խարկովի և Եկատերինոսլավի նահանգների գրեզական վարչատնիքների վրա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Սեպտեմբերի 19-ին կայացաւ Մեծ Իշխան Վադիմի Ալեքսանդրովիչի ներկայութեամբ, գլխավոր չտարի Նիկոլայեւիկայի աղագէմայի նոր շինութեան օրհնութիւնը:

20 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վիլնայի նահանգապետ պաշտօնակալ իշխան Գրուզինսկի նշանակված է Կայսրուհի Մարիայի խնամակալական խորհրդի Պետերբուրգի բաժանմունքի պատուաւոր խնամակալը: Կ. Սլոյն քաղաքը ժամատարի կողմից համարվում է ապստամբ:

ՏԱՇԿԷՆԸ: Անձրեւներ են գալիս. բամբակի առաջին տեսակը փչացաւ:

ԿԻԼ: Պրուսական պրինց Հենրիխ իր ամուսնու հետ ճանապարհ ընկաւ դէպի Սպայա, որպէս զի այդտեղ առևտուր կայաներական Ջոզիֆին:

ԼՈՆԴՈՆ: Նրէկ Բարտոլոմէոս աշուղութեամբ ջուրը թողնվեց անգլիական առաջին ստորջրեայ նաւը:

ԼՈՆԴՈՆ: Կիսաներ հետադրում է Պրետորիայից. «Սեպտեմբերի 17-ին Դէլայրի գիշերային յարձակումը գնդապետ Կէլկլիշի բանակապետի վրա Մէդլիլի մօտ կատարվեց մեծ եռանդով: Թշնամին ընդհատվեց էր մօտ 1000 մարդուց: Գիշերային կատաղի կռիւց յետոյ, որ տեւեց երկու ժամ, բռնեցին յետ մղվեցին մեծ կորուստներով: Անգլիացիների կորուստները ծանր են, սպանված են երկու օֆիցեր և 31 զինուոր, ծանր վիրավորված են 11 օֆիցեր և 48 զինուոր, իսկ 3 օֆիցեր և 26 զինուոր վիրավորված են թէթեւ կերպով: Բոլոր վիրավորվածները ուղարկվում են Բուտենբերգ: Բացի դրանից՝ մօտ 40 ուրիշ վիրավորվածներ, որոնց ծանր որոշ տեղեկութիւններ չը կան, նոյնպէս կուղարկվեն Բուտենբերգ: Այն տեղեկութիւնը, թէ թշնամին ծանր կորուստներ է ունեցել իտալա և Պրուսական ամրոցների մօտ, ճշտվում է: Ասում են, թէ սպանված են 240 և վիրավորված են 300 բռնեցին:

ԼՈՆԴՈՆ: «S-t James-Gazette» լրագրի տեղեկութիւններով, լուրեր են պտուտւում, թէ հարաւային Աֆրիկա են ուղարկված նշանաւոր թւով օգնական զորքեր, թէ կը կազմվեն կամաւորների մի քանի նոր գնդեր և թէ մեծ քանակութեամբ զորքեր Հնդկաստանից կուղարկվեն հարաւային Աֆրիկա:

ՊԱՐԻԶ: Գնեւերային Լէրէլէն և Լալլէլ հաղորդեցին լրագրի թղթակցներին, թէ նրանց գուրս գալը պատուաւոր լէգէոնի չքանչի խորհրդի անդամութիւնից ամենեւին բողոքի միտք չունի այդ չքանչի նոր նշանակված կանցլեր գեներալ Ֆրանսուէի դէմ, բայց թէ նրանց պարտքն են համարում իրենց յարաւարելու իրենց հրամաններին:

Նակված կանցլեր գեներալ Ֆրանսուէի դէմ, բայց թէ նրանք իրանց պարտքն են համարում յայտնել իրանց համերաշխութիւնը գեներալ Դալուի հետ, որին հետագային պաշտօնից ժողով նրա համար, որ նա հրաժարվեց ջնջել չքանչի անպետքների ցանկից կռու Լիւր-Մալիւսի անունը, որ գաղտնաբերված է գերազոյն գաղտնարանից:

ԽՈՐԱԳԻՐ ԱՆԷՔՍԱՆԴՐՈՍԱՆՔԱՐ ՀՐՈՒՄԱՐԱԿԻՆԵՐ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԱՆ ԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱՒԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուլիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ԱՄԵՆՈՐ, ԲԱՅԵՐ ԿԻՐԱԿԻՐՈՐԵՐԻՑ:

ԱՌԱՋՈՑՆԵՐԸ

Բ. Ս. Նաւասարդեան—1—12 ժ. վիրաւորութեան, վերական (սիֆիլիս) և միզաճեռ. հիւանդ.

Կ. Ս. Չիկովանի—9—10 ժ. ալքի, ներքին և ներքային հ.

Կ. Բ. Գոլիկով—12—1 ժ. ակունքի, քթի և կուրքի հ.

Չ. Բ. Բարսեղեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Կ. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխայից հ.

Ն. Ն. Ռոստամբեկով—5—6 ժ. վիրաւորութեան և մարթի հ.

Ս. Ն. Շալկովսկի—6—7 ժ. ներքային (երկրորդ) վիճակ, և մարթի հ.

Կ. Ս. Թաւրանեան—7—7 1/2 ժ. ներքին և երեխայից հ.

Կ. Ս. Նաւասարդեան—7 1/2—8 ժ. վար 50 կ. չքաւորներ ծրիւ համարորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին.

Օ. Տ. Առվանիսի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամար. զիմի 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերահսկող:

Բժշկապետ Կ. Ս. ԱՄԱՆԻՆ

ԼՈՅՍՈՒՆՈՒՆ

ԲԺՇԿԱՊԵՏ ԱՄՐՈՒՆՈՒ

„ՄԻ ԻՄԻՐ“

2-դ տպագրութեամբ: (3 պատկ.)

ԳԻՆԵ ԵՆԿ.

Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ, Կենտրոնական գրադատարանի և հեղինակի մօտ. Д-ръ В. Арпуни. 10—10

Թաւրիզի Միացեալ Հայունեանց Բարեգործական ընկերութեան կար ու ձեւի արհեստանոցների համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Պայմանների համար գիմել Օլգինսկայա փ., № 19, տ. Ժօրժին: 3—3

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ

Դ Պ Ր Ո Ց

ՕՐ. Ն. Գ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ

տեղափոխվել է Бебутовская ул., Арсеневский тупикъ, домъ князя Опристова.

Ընդունելութիւնը շարունակվում է:

3—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Խոնարհաբար խնդրում եմ Թիֆլիսի (Մէյ-դանի) Կաթնղիւղ և Աստուածածնայ եկեղեցու ծխականներից կիրակի, սեպտեմբերի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, չնորհ բերել յիշեալ եկեղեցին, վերջինիս վերանորոգութեան մասին խորհրդակցելու:

Նրէցփոխ Գրիգոր Բայանդուրեանց

3—3

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ

որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուները, կամենում է տնային վարժուհու պաշտօն ստանալ Թիֆլիսում կամ այլ քաղաքում, 7—9 տարեկան փոքրահասակ մէկ կամ երկու աղջիկների հետ պարագիւր համար: Կր կամենար նաեւ կոմպանիօնիս լինել մի տիկնոջ:

Հասցէ՝ Театральная улица, Кавказское Товарищество Торговли Аптекарами Товарами. Спросить казначея Петрова. 3—3

ՄԵՆԱԲԱՐՁՈՒՀԻ-ՄԵՍՍԺԻՍԿԱ

Սրբուհի Մօշաթիւնը ընկնում է Կազմակարգ փողոցում, № 19 տան մէջ: 3—4

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը.

Փ ա փ ա զ ե ա ն Վ., Պատմութեան, Թիֆլիս, 1901 թ. գ. 50 կ. Շ ի Ր Վ ա զ ա զ է, Նամուս, Բ. տիպ. Թիֆլիս, 1901 թ. 1 ր.

Բ ու զ ու զ ե ա ն Ա. Բժ., 1) Մարմնավարչութիւն 25 պատկերով—20 կ., 2) Մանկավարժական համառոտ դրոշմներ—15 կ., 3) Ժառանգականութիւն և դատարարականութիւն—15 կ., 4) Ով է յանցաւորը—15 կ., 5) Առողջ հոգին առողջ մարմնի մէջ—10 կ., 6) Գեղձայտ (գոյտուխ) —10 կ., 8) Մեր նեարդերը—10 կ. և 9) Վեներական ախտեր—5 կոպ.

Ա Ր ժ Ր ու Ն ի Վ ա Ն. Բ. Բ., 1) Մի խմբի, Բ. տիպ. նկարներով—5 կոպ., 2) Վատ ցաւ, նկարներով—6 կ. և 3) Ամուսնութիւն, առողջապահական էտիւդ—75 կ.

Տ է Ր-Յ ո Վ ա Ն ի Վ ա Ն ա յ. Բ ա Ն., 1) Աստուծոյ տաճարը—8 կ., 2) Փանայա—15 կ. և 3) Եկեղեցական սուրբ պատկերներ—5 կ.

Փ ա Ն ե ա Ն յ Խ ա Ն. Բ ա Ն., Մարդկային կեանքի վարժանական նպատակը, Վաղարշապատ 1901 թ., գ. 15 կ.

Ա յ Վ ա զ ե ա Ն Բ., 1) Հիւսիսի արժիւր, պատմական վէպ, Թիֆլի. 1901 թ. գ. 1 ր., 2) Առաւ Երկաթ, պատմական վէպ, Բ. տիպ., գ. 1 ր.

Ս ա Ր զ ա ե ա Ն Լ., Հին ցաւ (հրապարակախօսական խոսք), Մոսկվա, 1900 թ. գ. 30 կ. Ղ ա զ ա Ր ե ա Ն Յ ա Վ., 1) Հա վայա, փոք. 1 արար. 2) Կրթութիւնը խաթայ չէ, կատակերգ. 1 արար., Թիֆլի. 1901 թ. գ. 15 կ.

Վ ե Ն ե ա Ն ի Վ Ր ա Ր ա Ն թ ի Ն., Գեղունի, պատկերազարդ գեղարուեստական հրատարակութիւն, Վենետիկ 1901 թ. գ. 1 ր.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (ո.) 2—4

Շ Ղ Թ Ա Յ

Հաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ երրորդ 100/0-ի վճարը, այսինքն իւրաքանչիւր փային 10 րուբլի, նշանակված է սոյն սեպտեմբերի 14-ից մինչև 22-ը ներգրանված:

Բաժնետէրերը վճարման ժամանակ պէտք է ներկայանան բաժնետոմսերը:

Նաեւ յիշեցնում է Ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածը:

Ընկերութեան գրասենեակը, Նրեւանեան հրապարակ, տուն Խարաղեանի: (4, 11, 14, 17, 21).

5—5

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

Ա. Պոզնանի գումարով հրատարակված հետեւեալ մանկական գրքերը

«Անդադր Հանէւր», պատկերազարդ, փոխադրութիւն Լ. Մէլիք Աղամանի, գինն է. . . 40 կ.

«Կայէնն ու Մանէնը» . . . 40 »

«Եօթն աղաւա» . . . 40 »

«Պատիկ ու չտիկ» . . . 40 »

«Ենչ է առում սենեակը», . . . 10 »

«Եղծով դատաստան»: Թարգմանութիւն Սա. Մալխասանի . . . 5 »

«Մաքսիմա», ժողովրդական գրադարան, Թարգմ. Ար. Միխայիլեանի . . . 15 »

«Արդար ծերունի» . . . 10 »

«Պատու ծրար», մանկական գրադարան, Թարգ. տիկ. Նդ. Սարգսեանի . . . 3 »

«Մասի արկածները» . . . 10 »

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну. 9—10

ՀԱՇՈՒՆԱԳՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՆԵԱՅԵՐԻ XII շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՋԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահ և թեւեւ

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Յերեւ տնոյ անձանց՝ 4 ամսով ընթացքում հայուապահութիւն գործնականապէս և բոլոր խնդիրներով, և եղած դէպքերում լսնան և առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՈՒՆԻՔԻ ԱՌԱՂԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ձևերի, հանդէր ձեռնարկի արդիւնաբերական և կերտնի գործարանական հաշուետւութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն:

Գ) Առևտրական նախակազմութիւն:

Դ) Առևտրական և մուրհակների կանոնադրութիւն:

Ե) Կեղազրութիւն և ամենալատ ձևերի ուղղելը:

Պարագլուխները սկսվելու են 1901 թ.ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20/10 ամսից յետոյ:

Ի Ի Ր Ա Ք Ա Ն Զ Ի Ի Դ Կ ՈՒՐ Ս Ի Վ Ճ Ա Ր Ն Է 60 Ր ՈՒ Բ Լ Ի

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երկուշաբթի, Կ Ո Ւ Կ Ի Ա, Նիկոլայեւսկայա փողոց, սեփական տուն, № 46: (Николаевская ул. № 46):

Վերոյիշալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիսի մօտ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր գրադատարաններում: Գինն է 3 ր. 50 կոպէկ: Օտարալրաբացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու:

27—25

Կ Օ Ն Ֆ Ե Տ Ի Ե Ն Շ Օ Կ Օ Ղ Վ Ե Ի

գ ո Ր ժ ա Ր ա Ն

„Փ. Ն. ՓՐԻՒՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մոնպանսէ, մարմէլադ, պաստիլա, զէֆիր և այլն:

Պատուէրներով դիմել գործարան. Պավլովայա փողոց, սեփական տուն, տէլեֆոն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մեյլանում, եղբ. Հէջուրեանների տանը, տէլեֆոն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կոյունիական խանութներում:

Բազուի և Բազուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարեանց, Միւրայիւնի փող., տ. Աշունեանի:

55—100